մեծութեանն վերահաստատեսցի Սինոթական կառավարութիւնն աթոռոյ մերոյ Էջմիածնի ըստ ամենայն պարտուպատշաճ հարկաւոր հանգամանաց իւրոց և պարագայից, հանդերձ զերծալիվ, որով զօրասցին և թագաւորեսցին օրէնք միայն յօգուտ եկեղեցւոյ և յերջանկութիւն հասարակութեան, որպէս և յօգուտ իսկ տէրութեան։ Երկրորդ, զի յարգելով զպատիվ օրինաց և կանոնաց մի եւս այսուհետեւ հաճեսջիք բնաւ ձեռնադրել զոք եպիսկոպոս ըստ հաճոյս և ինքնօրէն, այլ խորհրդով և ընտրութեամբ, և համակամութեամբ Սինոթին, բարձրագոյն հրամանաւ, քանզի բաւական են շփոթութիւնք և անկարգութիւնքն յառաջացեալ մինչ ցայսօր յանընտրաբար անխտիր ձեռնադրութենէ. սոյնպէս եւս մի՛ հաճեսցի բնաւ վեհաստիճանութիւն ձեր միջնորդել երբէք յաղագս վարձատրելոյ զովոք և իցէ կայսերական ողորմութեամբք առանց խորհրդոյ և համաձայնութեամբ Սինոթին և մեր։

Երրորդ, զի Վեհաստիճանութիւն ձեր հաճեսցի ըստ օրինաց ցուցանել Սինոթին և մեզ պարզ հաշիւ վասն ամենայն արդեանց և գումարացն ստացելոց ձեռամբ Ձերով կամ ի ձեռս ձեր հասելոց նախ քան զօծումն ձեր յաւուրս առաջնորդութեան ձերոյ ի տփխիս, և զկնի օծութեան ձերոյ մինչ յայսօր ժամանակի։

Չորրորդ, ի վերջոյ ամենայնի առաջի առնեմք և զայս, զոր թէպէտ ծանր է յոյժ և լոկ բանիվ իսկ յիշատակելն, թող թէ գրով արծարծեցուցանել. այլ զի կարի յոյժ մեծացան պատճառաւ այսր անարգանք աթոռոյն և աթոռայնոց, և հայրապետութեանն և ձեր իսկ սրբութեանն անձին, բռնադատիմք խնդրել ամենախոնարհաբար նոյն պէս զի զկինն զայն զբերեալն Ձիօք ի տփխիզայ, զոր ունիք ընդ խնամարկութեամբ ձերով մինչ ցայսօր, հաճեսջիք արտաքսել անպատճառ ի տանէ անտի հօր սարկաւագի ձերոյ, և ի գեղջէն, զի հեռասցի նա ի քաղաք իւր տփխիզ անդր կամ ուր և ինքն կամեսցի. նոյն պէս և սարկաւագդ ի բաց հանել ի ձէնջ և ի միաբանութենէ աթոռոյս գլխովին և արտաքսել, քանզի բաւականք են վնասքն և այնքան խայտառակութիւնքն յառաջացեալ ի պատճառս դոցայ։ Եւ ձերում Վեհաստիճանութեան անվայել է ամենեվին պաշտպան լինիլ այդպիսեաց։ Հուսկ ապա խնդրեմք եւս ամենախոնարհաբար զի Վեհաստիճանութիւն Ձեր